



ԴՎԲ	Դրամավարկային քաղաքականություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴՊՀ (ՖՊՀ)	Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ
ՍԳԻ, ԱԱԳ	Սպառողական գների ինդեքս, Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
MoM	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը
YoY	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը
QoQ	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
WoW	Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը
K	Հազար, ամերիկյան գրեյաձև
B	Միլիարդ, ամերիկյան գրեյաձև
PMI	Purchasing Managers' Index. ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները
Core (բազային)	Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տատանումներ ունեցող բաղադրիչներ

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19

Վերլուծաբաններ՝ Թ.Սարգսյան, Դ.Տերյան


(010) 591 525, (010) 591 526

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ. օգոստոս ամսին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ գրանցել է 0.6% աճ: 2018թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածում տնտեսական ակտիվության ցուցանիշի տարեկան աճը կազմել է 7.7%: Աճ է գրանցվել ՀՀ տնտեսության բոլոր ճյուղերում, բացի գյուղատնտեսությունից:
- 2018թ. օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ գյուղատնտեսության ոլորտում արձանագրվել է 16.7% անկում, իսկ հունվար-օգոստոսին նախորդ տարվա հունվար-օգոստոսի նկատմամբ անկումը կազմել է 1%:
- Արդյունաբերության ոլորտում թողարկված արտադրանքի ծավալը աճել է 5.4%-ով՝ կազմելով 144.3 մլրդ դրամ: Աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 9.2% և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի

ՀՀ տնտեսության հիմնական ճյուղերում գրանցված աճի դինամիկան 2017-2018թթ., % (YoY) /աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ/



մատակարարման 9.3% աճով:

- Առևտրաշրջանառության ծավալը կազմել է 262.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա օգոստոս ամսվա նկատմամբ աճելով 4.7%-ով:

- Ծառայությունների ծավալը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ աճել է 20.5%-ով՝ կազմելով 158.8 մլրդ դրամ, իսկ հունվար-օգոստոսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 18.9%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է եղել կացության ու հանրային սննդի կազմակերպման և մշակույթի, զվարճությունների ու հանգստի ոլորտներում գրանցված աճով:
- Շինարարության ոլորտում օգոստոս ամսին գրանցված աճը կազմել է 1.6%, իսկ հունվար-օգոստոսին՝ 8.5%՝ իրականացված շինարարության ծավալը կազմելով 40.8 մլրդ դրամ:

Գնային միջավայր

- Օգոստոս ամսին գրանցվել է գնաճի տեմպերի արագացում: Մասնավորապես, 12-ամսյա գնաճը կազմել է 3.3%՝ գերազանցելով նախորդ ամսվա 2.3% աճը, իսկ ամսական կտրվածքով արդեն երեք ամիս շարունակ գրանցվող գնանկումներից հետո առաջին անգամ գրանցվել է 0.6% գնաճ:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ օգոստոսին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 104.3 մլրդ դրամ, ծախսերը՝ 100.1 մլրդ դրամ՝ արդյունքում գրանցելով 4.2 մլրդ դրամի պրոֆիցիտ:
- 2018թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածում պետական բյուջեի եկամուտները կազմել են մոտ 779.6 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 851.3 մլրդ դրամ: Արդյունքում գրանցվել է մոտ 71.6 մլրդ դրամի պակասուրդ¹:
- ՀՀ պետական պարտքն 2018թ օգոստոսին կազմել է 6.76 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 2017թ նույն ամսվա արժեքը գերազանցում է 8%-ով: Միայն արտաքին պարտքը օգոստոսի վերջի դրությամբ կազմել է 5.44 մլրդ ԱՄՆ դոլար՝ ավելանալով տարեկան 8.3%-ով: Ներքին պարտքն, իր հերթին, նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ավելացել է 6.6%-ով՝ կազմելով 1.33 մլրդ ԱՄՆ դոլար:

¹ 2018թ ցուցանիշները ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացվում են համաձայն 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ և 456-րդ հոդվածների, ըստ որի՝ «Հարկեր և փուլեր» ցուցանիշում առանձնացվել է «Հարկերի անցումային գերավճար» ցուցանիշը: Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտների մասով ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշների հետ՝ աճի տեմպեր չեն հաշվարկվել:


ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Արտաքին առևտուր

• 2018թ օգոստոսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 647 մլն ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 21.2%-ով: Առևտրաշրջանառության կազմում արտահանման ծավալների աճը կազմել է 5%՝ հասնելով 209.5 մլն դոլարի, իսկ ներմուծման ծավալներն աճել են 30.3%-ով՝ մինչև 437.5 մլն ԱՄՆ դոլար:

• ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռն օգոստոսին կազմել է -228 մլն ԱՄՆ դոլար (հունվար-օգոստոսին՝ 1,587.6 մլն. ԱՄՆ դոլար):

ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշներ /մլն ԱՄՆ դոլար / աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ




Դրամական հոսքեր

• 2018թ օգոստոսին արդեն երրորդ ամիսը շարունակ գրանցվում է դրամական միջոցների զուտ ներհոսքի կրճատում: Նախորդ տարվա օգոստոսի համեմատ առևտրային բանկերի միջոցով դրամական միջոցների զուտ ներհոսքը նվազել է մոտ 35.5%-ով՝ կազմելով 63.9 մլն ԱՄՆ դոլար:


• Նախորդ ամսվա նկատմամբ ցուցանիշը նվազել է շուրջ 21%-ով:

Դրամական միջոցների զուտ ներհոսք / մլն ԱՄՆ դոլար



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ. օգոստոսին ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալները նախորդ ամսվա ցուցանիշի նկատմամբ ավելացել են 0.8%-ով՝ կազմելով 2.97 տրլն դրամ:
- Բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալները նույն ամսում ավելացել են 1.14%-ով՝ կազմելով 2.73 տրլն դրամ:




ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱ

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ


Սեպտեմբեր ամսվա սկզբից հրապարակվեցին ԱՄՆ աշխատանքի շուկայի դրական տվյալներ, մասնավորապես, օգոստոս ամսվա ընթացքում ստեղծված նոր աշխատատեղերի թիվն ավելացել էր 200 հազարով, իսկ միջին ժամային աշխատավարձի աճի տեմպերն արագացել էին՝ հասնելով մեկ տարվա մաքսիմումների: Նման տվյալների հրապարակումն ավելացրեց ԱՄՆ ՖՊՀ կողմից դրամավարկային քաղաքականության բազային

USD Index / 2018թ. Սեպտեմբեր



տոկոսադրույքի բարձրացման սպասումները, սակայն առևտրային պատերազմների հետ կապված մտավախություններն ու ամսվա ընթացքում մի շարք բացասական ցուցանիշների հրապարակումը հանգեցրին մինչ սեպտեմբերի 26-ը ԱՄՆ դոլարի ինդեքսի՝ ավելի քան

EUR/USD փոխարժեք / 2018թ. Սեպտեմբեր




1.4% անկման: Մասնավորապես, հրապարակված տվյալները ցույց տվեցին ինֆլյացիայի տեմպերի դանդաղում (օգոստոսին ՍԳԻ տարեկան աճը կազմել է 2.7% նախկին 2.9%-ի փոխարեն, իսկ ամսական կտրվածքով գրանցվել է 0.2% գնաճ կանխատեսվող 0.3%-ի փոխարեն): Նվազել են նաև ԱՄՆ մանրածախ առևտրի աճի տեմպերը, ծառայությունների ոլորտում գործարար ակտիվությունը: Արդեն սեպտեմբեր ամսվա վերջին շաբաթվա ընթացքում հրապարակվեց ԱՄՆ-ում սպառողների վստահության ինդեքսի տվյալը, որը նախորդ ամսվա 134.7 գործակցից աճել էր մինչև 138.4, իսկ ՖՊՀ կողմից

սեպտեմբերի 26-ին հրապարակվեց ԴՎԲ բազային տոկոսադրույքը 0.25 կետով բարձրացնելու վերաբերյալ որոշումը (վերջինս սահմանվեց 2% - 2.25% միջակայքում): Այդպիսով, սեպտեմբեր ամսվա վերջին շաբաթվա ընթացքում ԱՄՆ դոլարը որոշ չափով կարողացավ վերականգնել դիրքերը՝ ամսական անկումը կրճատելով մինչև -0.36%:

EUR/USD զույգը սեպտեմբեր ամսվա ընթացքում մինչև ԱՄՆ ՖՊՀ նիստը (սեպտեմբերի 25-26) գրանցեց ավելի քան 1.3% աճ, սակայն արդեն ամսվա վերջում կորցրեց գրանցված գրեթե ամբողջ աճը՝ վերադառնալով 1.1610-ից ցածր արժեքների:

GBP/USD փոխարժեք / 2018թ. հոկտեմբեր



Սեպտեմբերի 13-ին տեղի ունեցած հերթական նիստում ԵԿԲ-ն որոշեց անփոփոխ թողնել դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները: Հիշեցնենք, որ դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները ԵԿԲ հուլիսյան նիստում ևս պահպանվել էին նախկին մակարդակներում (վերաֆինանսավորման տոկոսադրույք՝ 0.0%, ավանդադրման տոկոսադրույք՝ -0.4%) և ԵԿԲ ներկայացուցիչների կողմից հայտարարվել էր, որ քանակական մեղմացման ծրագրի (QE)


շրջանակներում ակտիվների գնումները կշարունակվեն մինչև 2018թ. վերջ (ամսական 15

մյրդ եվրո ծավալով), իսկ տոկոսադրույքների բարձրացում կլինի 2019թ. Երկրորդ կիսամյակից ոչ շուտ:

2018թ. օգոստոսի 2-ին նախորդ տարվա նոյեմբերից հետո առաջին անգամ Անգլիայի Բանկը բարձրացրեց ԴՎՔ բազային տոկոսադրույքը 0.25 կետով: Վերջինս այժմ կազմում է 0.75%, ինչը վերջին տասը տարիների առավելագույն արժեքն է: Արդեն սեպտեմբերյան նիստում որոշվեց ԴՎՔ բազային տոկոսադրույքը թողնել անփոփոխ: GBP/USD զույգը սեպտեմբեր ամսվա ընթացքում գրանցեց մոտ 1% անկում՝ առավելապես պայմանավորված Brexit-ի հետ կապված մտավախություններով:

Ռուսաստանի Կենտրոնական բանկը 2018թ. տարվա սկզբից երկու անգամ 0.25 կետով տոկոսադրույքի նվազեցում իրականացնելուց հետո վերջինս պահպանում էր նույն մակարդակում 4 ամիս շարունակ: Օգոստոսին ռուսական արժույթն ԱՄՆ դոլարի նկատմամբ հասավ վերջին երկու տարիների նվազագույն արժեքների, իսկ սեպտեմբերի առաջին տասն օրերի ընթացքում USD/RUB զույգը դեպի վեր հատեց 70-ի սահմանը: Սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ ՌԴ ԿԲ նիստը և որոշվեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացնել 0.25 կետով՝ վերջինս սահմանելով 7.75% մակարդակում (վերջին 4 տարիների ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույքի առաջին բարձրացումը): ՌԴ ԿԲ նիստից հետո ռուսական ռուբլին սկսեց վերականգնել դիրքերը՝ մինչ ամսվա վերջ ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվելով ավելի քան 8%-ով, ինչին նպաստեց նաև նավթի գների աճը:

USD/RUB փոխարժեք / 2018թ. Սեպտեմբեր



ԱՊՐԱՆՔԱՅԻ ՇՈՒԿԱ

Նավթ: Brent տեսակի նավթի գները չորս ամիս շարունակ աճ գրանցելուց հետո հուլիս ամսվա ընթացքում նվազեցին ավելի քան 6.5%-ով, սակայն արդեն օգոստոս և սեպտեմբեր ամիսների ընթացքում աճողական դինամիկան վերականգնվեց և գրանցվեց գների համապատասխանաբար 4.27% և 6.85% աճ:

Շարունակում են աճել ԱՄՆ կողմից նավթի արդյունահանման ծավալները: ԱՄՆ Էներգետիկ ինֆորմացիոն ադմինիստրացիայի (EIA) կողմից հրապարակված

սեպտեմբերյան տվյալները ցույց տվեցին նավթի օրական արդյունահանման ծավալների աճ՝ մինչև ռեկորդային բարձր՝ 11.1 բարել/օր մակարդակ:

Միևնույն ժամանակ նավթի գների վրա շարունակվում է ԱՄՆ կողմից Իրանի նկատմամբ պատժամիջոցների կիրառմամբ պայմանավորված՝ առաջիկայում առաջարկի կրճատման սպասումների դրական ազդեցությունը: Բացի այդ, սեպտեմբեր ամսվա երեք շաբաթների ընթացքում գրանցվեցին ԱՄՆ նավթային պաշարների կրճատումներ և միայն վերջին շաբաթվա ընթացքում պաշարներն աճեցին ընդամենը մոտ 1.8 մլն բարելով:

Brent տեսակի նավթի գին / 2018թ. Սեպտեմբեր



վերջին շաբաթվա ընթացքում պաշարներն աճեցին

Ոսկի: Ոսկու գները սեպտեմբեր ամսվա ընթացքում տատանվում էին մեկ ունցիայի դիմաց 1194-1220 ԱՄՆ դոլար արժեքների միջակայքում: Արդեն ամսվա վերջում ԱՄՆ ՖԴՀ հերթական նիստից հետո, երբ որոշվեց դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը բարձրացնել 0.25 կետով (սահմանվեց 2%-2.25% միջակայք) ոսկու գինը գրանցեց ավելի քան 1.3% անկում՝ գրանցելով 1186 ԱՄՆ դոլարից ցածր արժեքներ (տոկոսադրույքների բարձրացումը տոկոսային եկամուտ չապահովող ոսկին ներդրողների համար դարձնում է քիչ գրավիչ և, բացի այդ, ԴՎՔ խստացման ֆոնին ԱՄՆ դոլարի արժևորումն այլ արժույթների տնօրինողների համար դոլարով գնանշվող ոսկին դարձնում է դժվար հասանելի):

Ոսկի / 2018թ. Սեպտեմբեր

